«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

07 Հունիսի 2021, N 11 - 1 (հարցման կարգով)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի հավելվածում փոփոխություններ կատարելու մասին հարցը»**՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կանոնակարգի հավելվածում «041301.28.7 Բուժհաստատությունների կառավարում» և «041301.31.7 Առողջապահության կառավարում և վարչարարություն» կրթական ծրագրերի ուսման վարձի չափը (1000000 (մեկ միլիոն ՀՀ դրամ)) վրիպակի պատճառով չի համապատասխանում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի 2020 թվականի հունվարի 22-ի նիստում (արձանագրություն N 11) հաստատված ուսման վարձի չափին (համապատասխանաբար՝ 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամ)): Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի N 10 - 7 որոշմամբ հաաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի» հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «041301.28.7 Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրի «Ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)» սյունակի «1000000» թիվը փոխարինել «1200000» թվով:

2) «041301.31.7 Առողջապահության կառավարում և վարչարարություն» կրթական ծրագրի «Ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)» սյունակի «1000000» թիվը փոխարինել «1200000» թվով:

2. Համալսարանի կայքում հրապարակված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը» վերաթողարկել նոր խմբագրմամբ:

3. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. հունիսի 7
Երևան